

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 14.4/[30410]-10

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5 -ԻՆ  
ԺԱՍՆ 16:00-ԻՆ ԿԱՅԱՅԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ  
ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան**

**Մասնակցում էին`**

- Հ. Նաղդայան - Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
- Կ. Կիրակոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ
- Ռ. Ալավերդյան - ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
- Ֆ. Բերիկյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
- Շ. Ասոյան - ՀՀ մշակույթի նախարարության մշակութային արժեքների պահպանության գործակալության պետ
- Լ. Ղազարյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի վարչության պետ
- Ձ. Աղաջանյան - ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության պետ
- Ն. Դուրյան - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ՔՀՎ-ի 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
- Ա. Թանաշյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ (հրավիրված)
- Ռ. Յուզբաշյան - ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության առաջնային բուժօգնության բաժնի վարիչ
- Գ. Արմաղանովա - Առողջապահության աշխատողների արհմիությունների հանրապետական կոմիտեի նախագահ (համաձայնությամբ)
- Ջ. Հասրաթյան - Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ (համաձայնությամբ)

Ա. Գևորգյան	- Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ (համաձայնությամբ)
Գ. Միրզոյան	- «Զինվորի մայր» Հ/Կ-ի նախագահ (համաձայնությամբ)
Յ. Գևորգյան	- Վաճառականների միության նախագահ (համաձայնությամբ)
Ն. Մարտիրոսյան	- «Միկա ցեմենտ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Ռ. Ծառուկյան	- «Գ. Կ. Ծառուկյան» ՍՊԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Գ. Սողոմոնյան	- Կրթության, գիտության և մշակույթի աշխատանքային խմբի ղեկավար
Ա. Ժամակոչյան	- «Դեմոկրատիայի դպրոց» ակումբ, սոցիոլոգ-փորձագետ, «Կանանց հանրապետական խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահության անդամ (համաձայնությամբ)
Ծ. Հարությունյան	- ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի ժողովրդավարության զարգացման հարցերով ավագ օգնական (հրավիրված)
Ա. Կարապետյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ (խորհրդի քարտուղար)

1. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացման Հայաստանի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ» կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումների իրականացման խնդիրների մասին

(Ձ. Աղաջանյան, Լ. Ղազարյան, Ջ. Հասրաթյան, Հ. Նաղդալյան,  
Ա. Կարապետյան, Տ. Մարգարյան)

**Քննարկումներից հետո որոշվեց** առաջարկել ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հ. Նաղդալյանին՝ նախապատրաստել «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացման՝ Հայաստանի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ

կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումները  
և այն սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

2. Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների Ազգային ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված և չկատարված, ինչպես նաև առաջացած խնդիրներից ելնելով չնախատեսված, բայց իրականացված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում

-----  
--  
(Լ. Ղազարյան, Ջ. Հասրաթյան, Հ. Նադդայան, Կ. Կիրակոսյան, Ջ. Աղաջանյան  
Ա. Կարապետյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել`**

1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մ. Մնացականյանին` 15-օրյա ժամկետում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել «Գենդերային հավասարության ազգային մեխանիզմը ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ,

2) ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության պետ Ջ. Աղաջանյանին և առաջարկել Համալսարանական կրթությամբ Կանանց ասոցիացիայի նախագահ Ջ. Հասրաթյանին` ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի առաջիկա նիստում զեկուցել 2010 թվականի մարտի 1-12-ը ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի (CSW) 54-րդ նստաշրջանում քննարկված խնդիրների մասին:

3. «Գենդերային քաղաքականության հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նախապատրաստման աշխատանքների մասին

-----  
(Ֆ. Բերիկյան, Ջ. Հասրաթյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել`** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մ. Մնացականյանին` 3-օրյա ժամկետում ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնել «Գենդերային քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծ:

4. Աշխատանքային խմբերի ծրագրերի մասին

---

(Ջ. Հասրաթյան, Գ. Սողոմոնյան, Հ. Նաղդալյան, Յ. Գևորգյան,  
Ռ. Ծառուկյան Ա. Կարապետյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց`**

- 1) հավանություն տալ աշխատանքային խմբերի ծրագրերին.
- 2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին, ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանին և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ա. Պետրոսյանին` նախարարությունների կողմից` յուրաքանչյուրն իր մասով, իրականացվող միջոցառումներում հաշվի առնել նաև ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի կրթության, գիտության և մշակույթի աշխատանքային խմբի առաջարկությունները:

5. Հայաստանի Հանրապետությունում տոնական օրեր սահմանելու մասին  
ՀՀ կառավարության աշխատակազմի հայտարարության նախագծի մասին

---

(Ա. Կարապետյան, Ռ. Ծառուկյան, Գ. Սողոմոնյան, Տ. Սարգսյան)

- 1) Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում տոնական օրեր սահմանելու մասին ՀՀ կառավարության աշխատակազմի հայտարարության տեքստի նախագծին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ